ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն
Երևան, Մելիք Ադամյան 2

հեռ. 56.35.09, 56.70.90, 56.21.51
www.hhk.am

ՖԱՔՍ 58.12.59
էլ. հասցե info@hhk.am

N 097 «12» մարտի 2012թ.

<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>
հասարակական կազմակերպության իրավաբան
Գ. Հայրապետյանին

Ի պատասխան ՀՀԿ նախագահ պարոն Ս.Սարգսյանին ուղղված
Ձեր 05.03.2012 թիվ 162- ի 4 հարցման

Հարգելի պարոն Հայրապետյան,

Հայտնում ենք, որ Ձեր հարցման մեջ նշված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը, մասնավորապես Հայաստանի Հանրապետական կուսակցության անունից նման բնույթի հեռախոսազանգեր չեն կատարվել:

Միևնույն ժամանակ նշենք, որ Ձեր հայցած տեղեկատվությունը չի համապատասխանում <Տեղեկատվության ազատության մասին> ՀՀ օրենքի դրույթներին, մասնավորապես, այդ օրենքում նշված <տեղեկատվություն> հասկացությանը:

Մասնավորապես, <Տեղեկատվության ազատության մասին> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն տեղեկություն է համարվում անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալներ՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից:Մինչդեռ դուք հայցում եք տեղեկատվություն ոչ թե *փաստի, իրադարձության, եղելության* վերաբերյալ, այլ դրա *նպատակի* մասին, առավել ևս որ ինքնին փաստը տեղի չի ունեցել:

ՀՀԿ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ
ՀՀ ԱԺ ՀՀԿ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ